ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԽՆԶՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

գ. Խնձորուտ N 52 << 28>> 09 2021 թ.
հեռ. 0282-94-1-15

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարո՛ն Կարապետյան

Հայտնում եմ Ձեզ,որ Խնձորուտի միջնակարգ դպրոցը հայտարարել է մրցույթ ֆիզկուլտուրայի/26 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Կից ներկայացնում ենք հայտարարությունը և խնդրում տեղադրել մարզպետարանի կայքում:

Առդիր 1 թերթ:

Խնձորուտի միջն. դպրոցի տնօրեն Հ. Օհանյան:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզի <<Խնձորուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի /26 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում/Ձև1/,մեկ լուսանկար 3×4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/

-անձը հաստատող փաստաթուղթ

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի մասին տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/

-ինքնակենսագրություն/Ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 5-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 7-ին ժամը 14:00-ին,ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 094-65-75-96 հեռախոսահամարով: